

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Մ. ՄԿՐՏՉՅԱՆ «ՀՈՎՆԱԹԱՆ ՆԱՂԱՇ»

Գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ, վերջերս լույս տեսավ Մ. Մկրտչյանի «Հովնաթան Նաղաշ» մենագրությունը, որ հեղինակը նպատակ է դրել մեր ընթերցող լայն հասարակությանը ծանոթացնել միջնադարի նշանավոր բանաստեղծին և նկարչին:

Չնայած Հովնաթանը իր ժամանակին Հայաստանում և նրա սահմաններից դուրս՝ Անգրիկովիտսի հարևան, հղրայրական ժողովուրդների մեջ ճանաչված, սիրված և երգիչ ու նկարիչ է եղել, սերտ կապ է ունեցել այդ ժողովուրդների հետ, սակայն, անցյալում պատմական ու քաղաքական հանդամանքները խանգարել են, որ նա ամբողջապես հրատարակվի, գնահատվի և հասնի երգչի սիրած ժողովրդական լայն մասսաներին:

Խեղճի հայ տպագրությունը սկիզբ է առել դեռևս 16-րդ դարի սկզբներում, բայց և այնպես 17-րդ և 18-րդ դարերում տպրող բանաստեղծն ու նկարիչը, աշուղն ու Երզնիացի մոռացության է մատնվել:

Մ. Մկրտչյանը ներածության մեջ մանրամասնորեն ցույց է տալիս Հովնաթանի գործերի հրատարակությունների տարեթիվը, հրատարակության տեղը, տեսակը և այլն: Նրանում է, որ հեղինակը կատարել է բարեխիղճ ու տքնաջան բանասիրական ուսումնասիրություն՝ ընթերցելով ու մշակելով Հովնաթան Նաղաշին վերաբերող գրեթե բոլոր ձեռագիր ու տպագիր գործերը:

Ներածության վերջում մատնանշվում է, որ նշանավոր բանաստեղծ ու նկարիչ Նաղաշի ստեղծագործությունները լիակատար կերպով հրատարակվել ու հայ ժողովրդի սեփականություն են դարձել միայն Սովետական իշխանության տարիներին:

Մ. Մկրտչյանը պատմական տվյալներով տալիս է այն միջավայրի նկարագիրը, որտեղ ապրել, աշխատել ու ստեղծագործել է Հովնաթան Նաղաշը:

Բանաստեղծի և նկարչի ծննդավայրը՝ Շոռոթը, 17—18-րդ դդ. եղել է նշանավոր վաճառաճ գյուղարար, որը առևտրական կապեր է ունեցել արևելքի և արևմուտքի առևտրական կենտրոնների ու մեծ քաղաքների հետ:

Հովնաթան Նաղաշի ապրած ժամանակաշրջանը նշանավոր է համեմատաբար տևական (մոտ 80 տարի) խաղաղ կացությամբ, երբ դադարել էին կործանարար պատերազմները պարսից շահերի և տաճկաց սուլթանների միջև: Այն այդ ժամանակաշրջանի հասարակական-սոցիալական կացության տարրեր կողմերն են, որ արտացոլվում են Նաղաշի քաղամոտիվ ոտանավորներում ու երգերում: Հովնաթանն եղել է այդ երկու դարերում ստեղծագործող նշանավոր և՛ բանաստեղծ, և՛ նկարիչ, և՛ երգիծաբան, և՛ աշուղ:

Մենագրության առավելություններից մեկն այն է, որ հեղինակը Նաղաշի կյանքի և ստեղծագործության հետ առնչվող խնդիրները շոշափելիս, ցույց է տալիս հայ և վրացի եղբայրական ժողովուրդների քաղաքական և հոգեկան կապը: Նրանք մոտ են իրար քաղաքական կացությանը, հոգևոր կուլտուրայով: Հայ նշանավոր երգիչ ու նկարիչ Նաղաշը երկար ժամանակ ապրել է վրաստանում:

Հեղինակը կանգ է առնում միջնադարյան տաղերգուների վրա՝ ցույց տալով նրանց արժեքն ու առանձնահատկությունը, թեմատիկան ու մոտիվները, հնարանքներն ու արվեստը, այդ տիպերը կապելով Հովնաթան Նաղաշի ստեղծագործության հետ: Ցույց է տրվում, որ Հովնաթանը իր բանաստեղծության քաղաքական մոտիվներով շարունակել ու զարգացրել է մեր միջնադարյան բանաստեղծության լավագույն, առաջադիմական ու մարդասիրական տրադիցիաները: Նա ավելի նուրբ, չափավոր ու գեղեցիկ է երգել սերը, գարունը, բնությունը, կինը, խրախճանքը, կյանքը:

Հ. Նաղաշի գրական ժառանգության ուսումնասիրությունն ու վերլուծումը բաժանված է հետևյալ մասերի՝ «Միտք և գարնան երգեր», «Խնձույթի և ուրախության երգեր», «Երգիծական ոտանավորներ», «Խոհական խրատական երգեր», «Հովնաթան աշուղ», «Արվեստը» և «Միջնադարյան պոեզիան Հովնաթանից հետո» վերջին գլուխը:

«Միրո և գարնան տաղեր» բաժնում ուտանավորներից բերված նմուշների Վերլուծման հիման վրա ցույց է տրվում, որ այս թեմատիկայի բնագավառում Նաղաշը շարունակել է միջնադարյան իր նախորդ քնարերգուներին, որտեղ սերն ու գարունը գեղարվեստորեն արտահայտվել են ավելի խոր, բնական ու գեղեցիկ:

Ցույց է տրված Կ. Նրդնկացու և Ն. Քուչակի ազդեցությունը Հովնաթան Նաղաշի նաև խոհական-խրատական երգերի վրա: Այս բաժնում վեր է հանված Նաղաշի սերտ կապը հայ ժողովրդի հետ, նրա ժողովրդասիրությունը: Բանաստեղծը խորապես ապրում է իր հարազատ ժողովրդի վիշտն ու ճակատագիրը:

Այնուհետև մենագրության հեղինակը վերլուծում ու վեր է հանում բանաստեղծի ստեղծագործության ակունքները՝ մեր ժողովրդական հարուստ բանահյուսությունը: Ծույց է տրվում ապա, որ Հովնաթան Նաղաշի ստեղծագործության գեղարվեստական բարձր արժանիքը պայմանավորված է մեր ժողովրդական բանահյուսության հարուստ ու հյութեղ նյութերի հետ, մի հարստությամբ, որ առանձնահատուկ է եղել մեր միջնադարի պոեզիայի համար:

Նաղաշ Հովնաթանի արվեստի և նրա ստեղծագործական հնարանքների մասին գրելիս, հեղինակը բացահայտել է բանաստեղծի գործերի գաղափարական էությունը, ժողովրդական ոգով գրված երգերը:

Երբ վերջում Մ. Մկրտչյանը կանգ է առնում «Միջնադարյան պոեզիան Հովնաթանից հետո» թեմայի վրա: Ընդհանուր առմամբ այս հաջողված գրքույկում կան նաև վիճելի հարցեր: Դժվար է, օրինակ, համաձայնվել հեղինակի հետևյալ պնդման հետ. «Սակայն միջնադարյան բանաստեղծները որքան էլ գրում էին աշխարհիկ թեմայով, այնուամենայնիվ նրանք կրում էին կրոնական աշխարհայացքի ազդեցությունը: Մինչդեռ Հովնաթանը այլ հայացք ունի կյանքի և հանդերձյալ աշխարհի մասին... Նա ժխտում է հանդերձյալ կյանքը, պայքարում կրոնական մտայնության դեմ» (էջ 93—94):

Կրոնի նկատմամբ իր հայացքներով Հովնաթան Նաղաշը նախորդներից շատ քիչ բանով է տարբերվում. նա ոչ ժխտում է հանդերձյալ կյանքը և ոչ էլ պայքարում է կրոնական մտայնության դեմ: Եթե Հովնաթանը ծաղրում է մոնթերին, կամ գյուղական մի կիսագրագետ բահանայի և կամ նրանց արատավոր կողմերն է խաբազանում, դա նշանակում է, որ նա իր նախորդներից առաջ է անցել, քայլում է կյանքի հետ համընթաց և ոչ թե պայքարում է կրոնական մտայնության դեմ: Այդ երկու-երեք երգիծական գործերը չեն Նաղաշի աշխարհայացքը որոշողը: Այստեղ արտասովոր ոչինչ չկա: Նաղաշից շատ ու շատ առաջ տգետ, պորտաբույծ, անիմաստասեր, իրենց կոչմանը չհամապատասխանող ոչ միայն գյուղական բահանաների, այլև բարձր կոչում ունեցող հեղեորականների ավելի սուր ու սպանիչ քննադատության են ենթարկել Մ. Խորենացին, Ղազար Փարպեցին: Իր «Թուղթ ընդհանրական»-ում Շնորհալին բացահայտում ու քննադատում է հեղեորական դասի արատները ու անխնա խաբազանում: Մի՞թե այս ամենը հիմք են տալիս մեզ ասելու, որ Խորենացին, Փարպեցին, Շնորհալին և նման շատ ուրիշները պայքարել են կրոնական մտայնության դեմ:

Հենց իրեն՝ հեղինակի կողմից 102 էջում արած մեջբերումը Նաղաշի «Խնճուկի և սուրխության երգեր» գլխից ժխտում է այն միտքը, թե Նաղաշ Հովնաթանը հերքում է հանդերձյալ կյանքը:

Այս բառյակում կան հետևյալ տողերը.

«Մանկունք երգեն տալ շարական, բալցր որպես բլրու
Մարմնաւոր ուրախացէր, հոգեորին մի կենայք ծոյլ...»

Սեր միջնադարի բոլոր ապերգոուններն էլ, ներառյալ և ինքը՝ Հովնաթան Նաղաշը, երգելով աշխարհիկ թեմաներ քնություն, գարուն, կին, գինի, կեր և խում, այնուամենայնիվ իրենց գործերից շատ տողեր ապացուցում են, որ նրանք, հավատացյալ են, քրիստոնյա: Նրանք երգում են ունալ կյանքը քնություն, սեր, գարուն, կին, կեր ու խում, մի խոսքով՝ աշխարհասեր են, սիրում են աշխարհի ունալ կյանքը, բայց միաժամանակ նրանք չեն ազատագրվել քրիստոնեական աշխարհայացքից, հանդերձյալ կյանքի և հոգու անմահության գաղափարից: Այս տեսակետից շատ բնորոշ են Հովնաթան Նաղաշի խրատական երգերից հետևյալ տողերը, որտեղ բանաստեղծը հաշտվում է աշխարհիկ ու հանդերձյալ կյանքի հասկացողությունների հետ, մարմնականի և հոգեկանի հետ:

«Վարդերն կու բացվի խօսի բլբուլն,
Մէջլիսի մէջն ցրունն ուհան, սմբուլ,
Աղաչենք մեր հոգոյ սուրբ եասաւուլն
Ու մեր հոգին խառնի սրբոց երամն:

(Ժողովածու, էջ 167)

...Դուր կերէր, խմեցէք, եղբայրք պատուական,
Եւ օհնենցիք զկատուած միշտ և յաւիտեան»

(անդ, 171)

...Մարմնաւոր ուրախացէի հոգեւորին մի կենայի ծոյլ.

(անդ, 183)

...Փառք Քրիստոսի, որ սեղանոյս մեզ արար արժան...

(անդ, 178)

...Աստուածադատը սեղան եղեալ աչաց յանդիման,

Անցեալ օրին օր չի հասնի, կեղնիք փռչիման...

(անդ, 178)

Անմահութեան հոտն բուր, աստուածազարդ սեղանէս,

Խնամք և շնորհքն Քրիստոսի անպակաս լիցի թանէս,

Բարեխօս ունիմք Տիրամայր, Մկրտիչն Յովհաննէս,

Ածէր, խմէր կարմիր գինի, խմողն ուրախ լին...

(անդ, էջ 181)

Մասն խմէր, մէկ ողորմի ասացէր իւրեան,

Տէրն Քրիստոս մեզ օգնեսցէ յաւուր յայտնութեան...

(անդ, 179)

Դեռ էլի կարելի է նման ոգով գրված տողեր մեջ բերել:

Ծվ վերջապես, ոչինչ չի պակասի Հովնաթան Նաղաշի արժանիքներից, եթե նա արհեստականորեն չդարձվի հանդերձալ կյանքի և քրիստոնեությունը ժխտող: Այս ամենը պետք է դիտել իր ժամանակի մեջ և բոլորովին էլ անհրաժեշտ չէ, որ այս կամ այն գրողին բարձրացնելու, արժեքավորելու համար դարձնել նրան հակաքրիստոնյա: Բանաստեղծի մեծությունը ամենից առաջ պետք է տեսնել նրա գործերի, նրա զեղարվեստական հնարանների մեջ. և թե որքան է նա ճիշտ և գեղեցիկ արտահայտել իր ժամանակի իրականության այս կամ այն երևույթը, կյանքը և ապա այնտեղ որոնել գործի սոցիալական և գաղափարական արժեքը:

Մ. Մկրտչյանը ցույց է տալիս, որ Հովնաթան Նաղաշը մեր միջնադարյան տաղերգուների թեմատիկայի և լավագույն տրագիցիաների շարունակողն ու զարգացնողն է եղել և դա ճիշտ է. Յակոբյան զարմանալիս այն է, որ Կ. Նրզնկացին, միջնադարյան մեր աշխարհիկ ընտանեկան կարապետը և մյուսները ըստ դրրի հեղինակի անհետևողական են ու միստիկ, իսկ Հովնաթան Նաղաշը՝ հանդերձալ կյանքի և կրոնը ժխտող: Ընդհանրապես:

Աշխարհիկ թեմաները մինչ Հովնաթան Նաղաշին հասնելու դարերի ընթացքում ապրել են իրենց զարգացումը: Ինչպես երկար է եղել այդ թեմաների անցած ճանապարհը, նրանք այնքան հզկվել, կոկվել, աշխարհականացել ու գեղեցկացել են, դարձել իրական, մարդկային: Դեռևս 7—8 հարյուր տարի Հովն. Նաղաշից առաջ մեր միջնադարի հանճարեղ բանաստեղծ Դրիգոր Նարեկացու գործերում երևում են բնությունը, գաւորներ, «գոյար վարդը», կինը, «ալեկոծվող ծովը, երկինքն ու երկիրը: Բնությունն ու մարդը՝ այս հավիտենական թեմաները հասնում են մեր մյուս մեծ բանաստեղծին՝ Ներսես Դեմոքրատյան, ապա Երզնկացուն, Քուչակին և վերջապես Հովնաթան Նաղաշին: Հովն. Նաղաշը չի կարող աշխարհայացքով կտրված լինել միջնադարի մյուս տաղերգուներից, որոնք իբր «նրշանիկ կյանք փնտրում են հանդերձալ աշխարհում»:

Անհիմն է հեղինակի այն միտքը, թե «Հովնաթանը դեմ դուրս գալով գրաբարին, որոշակի կեքպով գրում էր ժամանակի ժողովրդական լեզվով» (էջ 160): Նախքան Նաղաշը մեր շատ տաղերգուներ գրել են այդ լեզվով, միայն այն տարբերությամբ, որ Նաղաշը ավելի շատ է գործածել ոչ միայն այն ժամանակվա խոսակցական աշխարհարար այլև ոչ հայկական բառեր: Վերջնական թեմա Մ. Մկրտչյանի կողմից 95-րդ էջում մեջբերված 2—3 բառյակներում գործածված ոչ հայերեն բառերը, ինչպես վախտն, պաղչին, թազայ, արզայ, մազայ, տարուն (դարդն) առաջ և այլն: Նաղաշը գրել է այս լեզվով ոչ թե նրա համար, որ դեմ է եղել գրաբարին, այլ գա եղել է ժամանակի բանաստեղծության պահանջը. բայց այս դեռ չի նշանակել, որ մեր

միջնադարյան տաղերգուները զրաբարով բանաստեղծություն չեն գրել: Հետոն չգնալու համար հենց բերենք Հովնաթան Նաղաշի գործերից՝ կրոնական բնույթի բանաստեղծություններից մի նմուշ՝ մարուր և կոկիկ զրաբարով գրված:

«Տանմարմնոց վերօրհնեալ
Մարիամ կոյս գովեալ,
Ես եմ մեղօքս մեռեալ
Յարու գիս և բեկալ:
Ոսոխն այն սրտմանալ
Մահահօր դան զործեալ
Յանցիւ գիս յմբոնեալ
Օղնեա ինձ կոյս օրհնեալս»:

Գրքի մի շարք տողերում կան կրկնություններ, օրինակ՝ 24-րդ և 3-րդ տողը և 10-րդ տողերը: 60-րդ և 91-րդ լջերի մեջբերումները՝ «խապար ևս դրկել տանեն» և այլն: 90 և 91-րդ լջերի մեջբերումները՝ «Ասել ևս թի ահա ուր նաղաշ է» և այլն:

Սեչուշտ աշխատությունը շահած կլինելու, եթե դերձ լինելու վերոհիշյալ թերություններից:

Նյութի ուսումնասիրությունը կատարված է բարեխղճորեն ու բազմակողմանի: Հովն. Նաղաշի վերաբերյալ մինչև օրս մենք մի ամփոփ, ամբողջական գործ հրատարակված չենք ունեցել: Եղածներն էլ հոգվածներ են, ոչ ամբողջական և շատ վաղուց գրված, իսկ իտրերն էլ լրիվ ու ամբողջական գաղափար չեն տալիս Նաղաշի մասին: Այս ամբողջական ու մատչելի գործի հրատարակությամբ մեր քննադատը լայն հասարակությունը լրիվ ու ամփոփ պատկերացում կարող է կազմել միջնադարյան նշանավոր բանաստեղծ և նկարիչ Հովնաթան Նաղաշի մասին:

Գր. Հակոբյան

Հ. ԱՆԱՍՅԱՆ «ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԲՅՈՒՋԱՆԴԻԱՅԻ ԱՆԿՄԱՆ ՄԱՍԻՆ»

1953 թ. լրացավ Գոստանդնուպոլսի առման 500-ամյակը, որը պատմական խառնուրդի իրադարձություն է՝ և ծանր տոյափորություն է թուղել բաղադրակիրը աշխարհի վրա: Հ. Անասյանի վերջերս հրատարակված գիրքը՝ «Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին»² ճիշտ է, ուշացած, բայց տեղին և արժանավոր արձագանքն է այդ տխուր դարադարձի:

Հ. Անասյանը ղիտական հասարակայնությունն է ներկայացնում Արտահատ Անկյուրացու, Աբաբեյ Բադիշեցու և Երեմիա Չելեպի Բյուզանդիայի պատմական ողբերի համեմատական տեքստերը և. Պոլսի անկման մասին հետաքրքիր առաջաբանով և մանրամասն ու կարեւոր ծանոթագրություններով:

Բյուզանդիայի արտաքին քաղաքական դրությունը և ներքին սոցիալական ջլատող հակասությունները նրան կանգնեցրին անկման եզրին: Մուհամմեդի հաղթական հաջորդներն արդեն սկսել էին նվաճել Մերձավոր Արևելքը և Բյուզանդիան մոտ էր միակ պատվարը, միակ նեղուկը թուրքական հոսանքի դեմ:

Փոքրասիական ժողովուրդները, այդ թվում և հայ ժողովուրդը, որոնք արդեն մասամբ նվաճվել էին թուրքական հորդանների կողմից և գտնվում էին ընդհանուր նվաճման վտանգի տակ, իրենց հայացքը հառել էին Բյուզանդիայի վրա և նրանից էին տկնկալում իրենց փրկությունը:

¹ Լեո. Հայոց պատմություն, հատոր 3, էջ 384:

² Հայկական ՍՍՏ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1957, էջ 147: